

սածը վստահութիւնն էր: Պատերազմին պատճառներուն մէջ իրենք ալ մեզի չափ չափ ունէին. բայց անոր նպատակին վրայ անստուգութեան մէջ էին: Այս նպատակը պէտք էր ծղոյնել, որպէս զի անոնց վարձուածն ու կապածը փարատէր:

Անոնց եւր ճիշդեւ ինչպէս:

ԳԵՐԵՍԵՆ ԵՎԱԾ ԼՈՒՐԵՐ

Այսօր թորով դաշնակից բանակէն սպրիլ 25 թուականով մայրաքաղաքիս յայտնուած լուրերը կուտայ:

«Ա» երթին նամակիս մէջ ռուսաց ձեռքէն յարձակմամբ առնուած ութը մեծ թնդանօթներու մարտիկի մը խօսքը ըրեր էի: Ուստի երկու անգամ փորձ փորձեցին այն զինքերը ետ առնելու, եւ երկու անգամուն ալ իրենց ջանքը ընդունայն եղաւ մեր զօրքերուն քաջութեանը առջեւ:

Աս փորձերուն մէջ ռուսերը շատ մարդ կորսնցնելով՝ հիմա հանդարտ նստեր են:

Ապրիլ 19 և 20 լուսնալու դիշերը եղած աստիկ կռիւն արդէն ծանօթ է ամենուն: Այն կռուոյն մէջ ռուսերուն զինադրութիւնը շատ աստիկ ու յամառ եղաւ առջի բերանը: Երբ անգամ մեր զօրքերը ռուսաց դարձաները առին՝ ու երբ անգամուն ալ ետ քշվեցան: Բայց վերջապէս հոն հաստատ մնային:

Ուստի զօրքերուն հրաման եղաւ վերջին անգամ մըն ալ մեր զօրքերուն վրայ քալելու, բայց չհաղանդեցան ու քաղաքը մտան: Արաւի թէ այս անհնաւ զանգուածեան համար շատ մարդ պատժվեցան զօրքերէն, եւ Այսօր թորով պահպան զօրքերուն ամենն ալ փոխվեցան:

Ուստի ձեռքէն առնուած զինքին վրայ 40 թնդանօթով մարտիկ մը կը շինվէ, որուն կրակը քաղաքին վրայ պիտի ուղղվի:

Ամեն բան իր առջի վիճակին մէջ մտաւ: Դամանակ ժամանակ երկու կողմէն թնդանօթներ կ'արձակվին եւ յառաջապահ կէտերէն հրացաններու ձայներ կը լսվին: Այսօր քաղաքի տէր է:

Գրեթէ թէ զաղղիական զօրքաւ ժին մը, երբ գունդ անգլիացի եւ կէս բաժին օսմանեան զօրք նաւերով ձամբայ ելան: Աս զօրքերը կ'երթային Արշակունի, որ Արաւու ծովէն մուտք կը պաշտպանէ, եւ ծովեզերքին երկայնութեամբ ռուսաց շինած ամրութիւնները աւերելու: Ամենք ալ անհամբերութեամբ այս արշաւանքէն լուր առնելու կ'սպասէինք. բայց սպրիլ 24 ին այս զօրքերը տանող նաւերուն չորսը Քամիէ չի նաւահանգիստը դարձան: Մնացածն ալ այս գիշեր դարձան եկան եւ զօրքերը նորէն ցամաք ելան:

Արաւի թէ զօրքերուն ձամբայ ելելէն ետեւ՝ Քանդակու սպարապետը Փարիզէն հեռագրով հրաման առեր է, որ բոլոր շողանաւները անյապաղ Ա. Պօլս խրկէ եւ հոն ժողոված զօրքերը Գրեթէ բերել տայ: Ապարապետն ալ պարտաւորվել է Տօֆէ շողանաւը արտօնօք ձամբայ հանելու Արշակունի զօրք տանող նաւերուն ետեւէն, որ ետ դառնան: Ասանկով արշաւանքն իր նպատակին չկրցաւ հասնիլ: Ամեն մարդ կը ցաւի աս բանին վրայ, ինչու որ ասիկա ամենէն լաւ միջոցն էր Այսօր թորով մէջ պաշարված ռուսերուն այն կողմէն եկած պաշարները կտրելու:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ահա ասիկ կայսերական կառավարութեան հանած յայտարարութիւնը տէրութեան ամեն կարգի հաշտակներէն զինուոր առնելու տնօրէնութեան վրայ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տէրութեան ամեն կարգի հաշտակները՝ առանց բացառութեան՝ հանդիսանալու եւ կրճատիլ ըլլալով այն արդար օրինաց հովանիին տակ որոնք Կորին կայսերական վեհափառութիւնը հաստատած է տէրութեան հիմունքը զօրացնելու եւ կառավարութեան ու ազգին շէնքը ամրացնելու միակ նպատակով:

Այստեղիկ հրովարտուած մը տէրութեան ընդհանուր բարօրութիւնը աւելցնելու յարմար դատված նոր կարգադրութիւններ ու օրէնքներ քննարկելու վրայ են, եւ հետզհետէ որոշվելով ի գործ պիտի դրվին:

Եւ որովհետեւ հարկաւոր տեսնվեցաւ ամենէն առաջ տէրութեան կանոնադրութեան ամեն կարգի հաշտակներուն գլխաւոր պարտաւորութիւնները որոշել, այս մասին պէտք եղած կանոնադրութիւնները հետզհետէ պիտի պատրաստվին ու ի գործ դրվին:

Աս պարտաւորութիւններուն առաջինն ու ամենէն կարեւորը զինուորական ծառայութիւնը ըլլալով, հարկաւոր դատվեցաւ այս նիւթի վրայ հաստատվելու կանոնադրութեան հիմունքը որոշել:

Յայտնի է, որ տէրութեան ամեն կարգի հաշտակները՝ առանց բացառութեան՝ հարկաւորաւ են հաշտակութեան պարտաւորութիւններէն յառաջ եկած պարտքերը կատարելու, եւ այս պարտաւորութեան ամենէն ծանրը զինուորական ծառայութիւնն է:

Մինչեւ հիմա աս պարտաւորութիւնը միակ տէրութեան Մահմադական հաշտակները կը կատարէին. բայց հայրենիքը ամենուն ալ ըլլալով, անոր պաշտպանութիւնն ալ ամենուն պարտաւորութիւնն է: Արեւմտ տէրութեան միւս հաշտակներն ալ պէտք է մասնակից ըլլան աս ծառայութեան, որն որ միայն մէկ կարգը կը կատարէր: Ենթադրուած ամենաբարձր պարտաւոր են, իրենց անձը ստալով պարտաւորութիւններ պիտի կատարեն, եւ անոնք որ իրական ծառայութեան մասնակից չըլլան, փոխարէն պիտի հատուցանեն:

Եւ որովհետեւ արդարութեան կանոնները կը պահանջեն, որ այս կարեւոր պարտաւորութեան կատարմանը մէջ հաւասար նմանութիւն մը հաստատվի, ասոր վրայօք կայսերական հրամանաւ եւ տէրութեան բարձրատիպան պաշտօնատարներուն համաձայն խորհրդով եղած որոշումը կը յայտնենք:

Օսմանեան տէրութեան այս զինուորական ծառայութիւնը ինչպէս վերը բնութագրուած ամեն հաշտակներուն պարտաւորութիւնն ըլլալով, Մահմադական չեղող հաշտակները՝ որ աս պարտաւորութեան մասնակից չեն ըլլար, ընդհանուր տուրքէն զատ յատուկ հարկ մը կը վճարէին Քիլի (խարաճ) անունով:

Այսուհետեւ նոյն հաշտակներն ալ զինուոր պիտի տան, որուն թիւը կառավարութիւնը պիտի որոշէ:

Մահմադական ժողովուրդը բազմութեանը եւ զենք գործածելու սովորու-

թեանը նայելով, կայսերական տէրութեան պահելը զօրաց մեծագոյն մասը միշտ Մահմադականներէն պիտի ըլլայ, եւ փոքագոյն մասը Մահմադական չեղող հաշտակներէն:

Ասանկով այս մասին ըլլալը որոշման համեմատ, տէրութեան միւս հաշտակներուն իրենց արու ժողովուրդը թրուէն եւ Մահմադական հաշտակներուն տուածին համեմատութեամբ տուր բոլոր զօրքերուն որոշեալ մէկ մասը իրական ծառայութեան առնվելով տէրութեան զօրաց կարգը պիտի մտնեն, մնացածն ալ զինուորական ծառայութեան փոխարէն զինուորական նպաստ (Կանէի սպէրիէ) անունով տուրք մը պիտի վճարեն իրենց սովորական տուրքէն զատ:

Աստուրքը առնելու կանոնը հետեւեալ հիմունք վրայ պիտի հաստատվի:

Տէրութեան Մահմադական չեղող հաշտակներուն պարտեւորութեանը զինուորներուն թիւը վերը նշանակված համեմատութեամբ պիտի որոշվի: Ենթադրուած զինուորական ծառայութիւն ընդհանուրն ալ զինուորական նպաստը այս տուրքին ընդհանուր գումարէն վար պիտի երթցվի, եւ մնացածը նոյն զինուորական ծառայութեան մասնակից ըլլալու պարտաւոր եղող յիշեալ հաշտակներուն արու մարդոցը վրայ պիտի բաժնրվի եւ իրենց սովորական տուրքին հետ պիտի առնվի:

Յատուկ կանոններ պիտի հաստատվին՝ այս տուրքէն ամեն մէկուն ինկած բաժինները եւ ժողովուրդը եղանակը արդարութեամբ որոշելու համար:

Չինուորական ծառայութեան մէջ զանրվելը անձանց նկատմամբ՝ զինուորական սահմանադրութեանց որոշած ծառայութեան տեւողութիւնը եւ զինուորապետութեան կանոնը հիմն պիտի ըլլան յատուկ կանոնադրութիւններ ընելու, որոնց նպատակը պիտի ըլլայ՝ ճիշդ համեմատութիւն մը հաստատել ամեն մէկ հաշտակ ժողովուրդեան տուրք զօրաց բաժինը եւ զինուորապետութեան եղանակը որոշելու համար, նմանապէս միակերպ կանոնի մը տակ զենք պահողներուն իրաւունքը, որոնք իրենց զինուորական ծառայութեանը մէջ ցուցցած յաջողակութիւնովն կամ կայսերական զօրքերուն մէջ ստացած հատուցումներն՝ պաշտօնատարի աստիճաններ առնելու արժանի պիտի ըլլան:

Այս կանոնադրութիւնները քննարկելու վրայ են, եւ քիչ առնելն պիտի հրատարակվին ու գործի դրվին:

Բ. Վուր տեսնելով իր ամեն հաւատարիմ հաշտակներուն անգաղար ցուցցած նախանձուն ու անձնաւորութեան ապացոյցները, եւ զիտնալով, որ ամենքն ալ հաւատարմապէս կը փափաքին ասանկ պարագաներուն մէջ իրենց բարեւար ինքնակալին, իրենց տէրութեանը եւ իրենց հայրենեացը ծառայելու, եւ ուղղով, որ իր հաշտակներէն անոնք՝ որ մինչեւ հիմա զինուորական ծառայութեան մասնակից եղած չեն, ասկէ անպիս մասնակից ըլլան այն պատուոյն ու փառացը որով զինուորական ծառայութիւնը այս օրերս պայծառացած է, որոշեց որ արտաքին կարգի անօրէնութեամբ եւ մինչեւ մշտնջենաւոր յատուկ կանոններուն կատարելապէս հաստատվելը՝ Անատոլի եւ Բուլղարի յարմար տեղերուն բնակիչներէն հարկաւոր դատվածին չափ զինուոր առնելի:

Թեպէտ ասիկա արտաքին կարգի

անօրէնութիւն մըն է, բայց աս անօրէնութեամբ հիմա առնուիլը զինուորները՝ ետքէն հաստատվելը մշտնջենաւոր օրէնքներուն սահմանած օգուտները պիտի վայելին. եւ այս կերպով առնուիլը զինուորներուն թիւը նոյն մշտնջենաւոր օրէնքներուն համեմատ ամեն մէկ ժողովուրդը համար որոշվելը իրական զինուորութեան եւ զինուորական տուրքին ընդհանուր բաժնին հաշիւը պիտի անցնի:

Թէ որ այս արտաքին կարգի տնօրէնութեամբ առնուած զօրքերուն մէջ անանկեր զանրվին որ յաջողակութեան ապացոյցներ տան եւ զինուորական պաշտօնատար ըլլալու արժանաւորութիւն ունենան, զինուորական աստիճաններ պիտի առնեն իրենց ծառայութեան աստիճանին ու իրենց արժանաւորութեանը համեմատ: Այս կերպով որոշումները ըլլալով, անոնց կատարման եղանակը յատուկ հրովարտակներով պիտի ծանուցվի եւ անմիջապէս գործադրութիւն պիտի ըլլայ:

Ահա այսպէս Բ. Վուր տէրութեան ամեն կարգի հաշտակներն իրենց կարողութեանն ու կայսերական համեմատ մասնակից ընելով զինուորական ծառայութեան, որ ունեցած զօրաւորութեանն ու աշխատութեանը հետ պատիւ ալ կը բերէ, նպատակ ունեցած է Մահմադականաց վրայ միայն ծանրացած ծառայութեան բեռը թեթեւցնել, եւ տէրութեան միւս կարգի հաշտակներն ալ տէրութեան եւ հայրենեաց ծառայելու պատուոյն եւ փառացը մասնակից ընել: Այս ալ նոր ապացոյց մը ըլլալով վեհափառ Կանէի օրէնքին իր առհասարակ ամեն կարգի հաշտակներուն վրայ անգաղար ունեցած առատագրութեանն ու բարեւար ինքնակալի, տարակից չունիլը որ ամեն մարդ զոհ եւ շնորհակալ պիտի ըլլայ այս բանին:

Այստեղիկ հրամանաւ՝ Բ. Վրան բարձրատիպան պաշտօնատարներէն մէկ քանին յատկապէս ընտրվեցան Բուլղարի ու Միսիսիոյ զանապառ գաւառներն երթալու, եւ վերայիշեալ կայսերական հրամանը արգարութեամբ ի գործ դնելու:

Այստեղիկ հրամանաւ՝ Արիֆ փաշան վեզիրութեան աստիճանաւ Տաճիկաց Կարգաւորներ գերեզմանին պահպանութեանը վերատեսուչ անուանեցաւ ի Մեթիսէ:

Արաւի նախկին տեղակալ Ապտիւլլահիֆ փաշան Սօֆիայի տեղակալ անուանեցաւ:

Ապտիւլլահիֆ փաշան Իշիկ տեղակալ անուանեցաւ:

Բարձրապատիւ Բէշտ փաշային Քահա հաւ Րաշտ էֆէնտին առաջին կարգի պաշտօնատար անուանեցաւ:

Այստեղիկ հրամանաւ՝ բարձրապատիւ Բէշտ փաշային արտաքին կարգի եւ աստիճանակալ զեպանատուրը հետեւեալ անձինքներէն պիտի բազմանայ:

Բարձրապատիւ Բէշտ փաշայի որդի եւ Արդարութեան բարձրագոյն աստիճան անգամ՝ Ահմադ Քիլի պէյը խորհրդական անուանեցաւ Պաշայ աստիճանաւ:

Կորին բարձրութեան որդի եւ Ահմադի զրաքանակներն անգամ Սալիհ պէյը՝ նոյն զեպանատուրն առաջին քարտուղար, Արդարութեան բարձրագոյն աս-

